



**30.11.2021թ. <ՅՈՒՆԻԲԱՆԿ> ԲԲԸ ԲԱԺՆԵՏԵՐԵՐԻ  
ԱՐՏԱՀԵՐԹ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ  
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ**

**Zoom հավելվածի միջոցով իրական ժամանակի ռեժիմում  
երեքշաբթի, 30 նոյեմբերի 2021թ., 14:10**

Մասնակցեցին՝

**Բաժնետերեր**

15 բաժնետեր նիստի բացման պահին

**Բանկի Խորհուրդ**

Գագիկ Զաքարյան (նախագահ)

Վարդան Աթայան

**Բանկի Վարչություն**

Մեսրոպ Հակոբյան (նախագահ)

Արարատ Ղուկասյան

Գոհար Գրիգորյան

Դավիթ Պետրոսյան

Գուրգեն Ղուկասյան

Արթուր Ապերյան

**Հրավիրվածներ**

ՀՀ կենտրոնական բանկի ներկայացուցիչ Մարիամ Ժամկոչյան

<Գրանթ Թորնթոն> ՓԲԸ գործադիր տնօրեն Արմեն Հովհաննիսյան

Հայաստանի Կենտրոնական Դեպոզիտարիայի ներկայացուցիչ Լևոն Կլեկչյան

Ժողովի քարտուղար նշանակվեց Հաշվիչ հանձնաժողովի նախագահ Աննա Բադոյանը:

**Աննա Բադոյանը** ներկայացրեց, որ 30.11.2021թ. <Յունիբանկ> ԲԲԸ Բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովի քվեարկությունն իրականացվել է քվեաթերթիկների միջոցով: Ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմված է 2021թ. նոյեմբերի 10 դրությամբ:

Ժողովի գումարման մասին հայտարարությունը պատշաճ կերպով հրապարակվել է Բանկի պաշտոնական կայքէջում, <168 Ժամ> թերթում, ծանուցումները քվեարթերթիկների հետ միասին ուղարկվել են բաժնետերերին փոստի միջոցով կամ հանձնվել են առձեռն 12.11.2021թ-ին:

Ժողովի օրակարգի հարցի վերաբերյալ լրացրած քվեարթերթիկների ընդունումն ավարտվել է 30.11.2021թ.' մինչև ժողովի մասնակիցների գրանցման ավարտի պահը: Հաշվիչ հանձնաժողովի արձանագրությունը կազմվել է 30.11.2021թ-ին:

Բանկի քվեարկող տեղաբաշխված սովորական բաժնետոմսերի գումարային ձայների քանակը կազմել է 172.886.525 հատ, որից քվեարկությանը մասնակցել են ձայնի իրավունք ունեցող 163.258.942 բաժնետոմս, կամ տոկոսային հարաբերությամբ 94.43%-ը: Քվորումն ապահովված է:

Բացելով նիստը և ողջունելով բոլոր բաժնետերերին և հյուրերին՝ **Ժողովի նախագահ Գագիկ Զաքարյանը** խոսքը փոխանցեց Վարչության նախագահ Մեսրոպ Հակոբյանին:

**Հարց 1. <Յունիբանկ> ԲԲԸ կանոնադրությունում փոփոխությունների հաստատում:**

**Վարչության նախագահ-գործադիր տնօրեն Մեսրոպ Հակոբյանը** ներկայացրեց, որ Բանկի կանոնադրությունում փոփոխությունները կապված են Բանկի կողմից հաստատագրված տարեկան շահութաբաժնով Բ դասի փոխարկելի արտոնյալ բաժնետոմսերի թողարկման ու տեղաբաշխման, ինչպես նաև Բանկի կառավարման մարմինների իրավասությունների վերանայման հետ:

Թողարկվել է 4,778,261 հատ հաստատագրված տարեկան շահութաբաժնով Բ դասի փոխարկելի արտոնյալ բաժնետոմսեր՝ 230 դրամ տեղաբաշխման (շուկայական) արժեքով: Թողարկված բաժնետոմսերի ընդհանուր տեղաբաշխման արժեքը կազմել է 1,099,000,030 ՀՀ դրամ: Արդյունքում Բանկի կանոնադրական կապիտալը կհամարվի 1,099,000,030 ՀՀ դրամով և կկազմի 21,588,652,530 ՀՀ դրամ, որը ներառում է տեղաբաշխված 172,886,525 հատ սովորական բաժնետոմս, 32,010,000 հատ հաստատագրված տարեկան շահութաբաժնով Ա դասի փոխարկելի արտոնյալ բաժնետոմս, 4,778,261 հատ հաստատագրված տարեկան շահութաբաժնով Բ դասի փոխարկելի արտոնյալ բաժնետոմս:

Արտոնյալ բաժնետոմսերի դիմաց տարեկան շահութաբաժինների վճարման կարգի հստակեցման նպատակով առաջարկվում է ամրագրել, որ տարեկան շահութաբաժնի հաշվարկն իրականացվում է բաժնետոմսերի ձեռքբերման օրվանից:

Կորպորատիվ կառավարման կատարելագործման նկատառումներից ելնելով՝ առաջարկվում է Խորհրդի որոշ իրավասություններ փոխանցել գործադիր մարմնին, մասնավորապես՝ Վարչության նախագահին տրամադրել համապատասխան աշխատակիցների աշխատավարձի չափի վերանայման իրավասություն՝ Խորհրդի հաստատած Բանկի տարեկան աշխատավարձային ֆոնդը գերազանցելով ոչ ավել քան 1%-ով, Վարչությանը լիազորել հաստատել հաճախորդների սպասարկման միասնական սակագները և կատարել փոփոխություններ և լրացումներ:

Քվեարկության հետևյալ արդյունքներով Բաժնետերերի ժողովը հաստատեց <Յունիբանկ> ԲԲԸ կանոնադրությունում փոփոխությունները և որոշում կայացրեց ներկայացնել ՀՀ Կենտրոնական բանկ գրանցման.

**կողմ՝** 162.389.376 ձայն կամ մասնակիցների ձայների 93.93%

**դեմ՝** 0 ձայն

**ձեռնպահ՝** 869.566 ձայն կամ մասնակիցների ձայների 0.50%

**անվավեր՝** 0 ձայն

**Աննա Բաղդյանը** հայտարարեց, որ ժողովի օրակարգը սպառված է:

**Ժողովի նախագահ Գագիկ Ջաքարյանը** շնորհակալություն հայտնեց միջոցառման մասնակիցներին և փակեց Բաժնետերերի ժողովը ժամը 14:20-ին:

---

**Գագիկ Ջաքարյան**  
**Նախագահ**

---

**Աննա Բաղդյան**  
**Քարտուղար**

ք. Երևան, 30 նոյեմբերի 2021թ.